ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ապրանքի ծագման տեղանուններ

Գրանցման համար	6
Հայտի համար	2014001
Հայտի ներկայացման թվականը	29.05.2014
Ծագման երկիրը	GE
Հրատարկվող տեղանունը	TSINANDALI, ՑԻՆԱՆԴԱԼԻ, ЦИНАНДАЛИ
ԱԾՄԴ-ի դասը	33

Ապրանքի տեսակը կամ կոնկրետ ապրանքը գինի

Ապրանքի հատուկ որակի նկարագրությունը՝

«Ցինանդալի»՝ սպիտակ չոր բարձրորակ գինի: Պատրաստվում է Ռկացիտելի և Կախուրի Մցվանե խաղողի տեսակներից:

«Ցինանդալի» գինին բնութագրվում է բաց ծղոտի գույնով, ներդաշնակ լիարժեք նրբահամությամբ և տեսակային անուշահոտությամբ:

«Ցինանդալի» գինու քիմիական տվյալները պետք է համապատասխանեն հետևյալ ցուցանիշներին.

սպիրտի ծավալային պարունակությունը՝ 10,5-12,5 %

շաքարի զանգվածային խտությունը՝ 3 գ/դմ^3 ոչ ավել

տիտրվող թթվությունը՝ 5,5-7,5 գ/դմ^3

ցնդող թթուները՝ 1,0 գ/ դմ^3 ոչ ավել

էքստրակտի զանգվածի բերված խտությունը՝ 16գ/դմ^3 ոչ ավել

ընդհանուր ծծմբի երկօքսիդի զանգվածի խտությունը՝ 210 մգ/դմ^3 ոչ ավել

ազատ ծծմբի երկօքսիդի խտությունը՝ 30 մգ/դմ^3 ոչ ավել:

Կապն աշխարհագրական ծագման հետ՝

«Ցինանդալի» միկրոգոտու յուրահատուկ դիրքը՝ միկրոկլիման, ստեղծված Ցիվգոմորյան լեռնաշղթայի հյուսիս-արևելյան լանջերով, ավազակավերով, անտառանման, կարբոնատային, ջրաբերուկ-հեղեղաբերուկ և ողողակա–ջրաբեր ծագմամբ և խճային փռվածքներով: Տվյալ գոտում Սապերավի խաղողում շաքարի բարձր պարունակությունը որոշում է «Ցինանդալի» գինու տարբերակիչ հատկությունները: Ռկացիտելի և Կախուրի Մցվանե տեսակների ներդաշնակությունը բնորոշում է «Ցինանդալի» գինու յուրահատկությունները:

Աշխարհագրական գոտին՝ Ցինանդալի խաղողագործության հատուկ գոտին գտնվում է Թելավի վարչական շրջանում, Ալազանի գետի աջ ափին, 41°54′ հյուսիսային լայնության և 45°35′ արևելյան երկայնության կոորդինատներում: